

տուկ զործ կը համարին՝ հանգանակ յօրինելը: Ասոր հակառակ յայտնի է որ՝ Նիկիական հանգանակը՝ Նիկիական ժողովէն չէ թէ ըստ բոլորին շինուեցաւ, հապա մինակ աւելցուեցաւ, «այս ինքն յեութենէ չօր», եւ «էակից չօր», մնացեալը (վերջին նշովքէն զատ) ժողովէն առաջ իր գոյութիւնն ունէր: Այսչափ ճիշտացած էր պարզ՝ Առաքելական հանգանակը Արեւելից եկեղեցիներուն մէջ՝ 47. դարու սկիզբները:

Իսկ Ս-Պոլսոյ ժողովն՝ իրեն անունը կրող հանգանակին եւ ոչ իսկ յաւելուածոցը հեղինակն է. վասն զի նոյն սիւնհոգոսն ուրիշ բան ըրած չէ յայսմ, բայց եթէ հանդիսական կերպով մը դաւանիլ հանգանակ մը կամ Նիկիական հանգանակին մէկ ընդարձակուած ձեւը՝ այնպէս ինչպէս որ արդէն Արեւելից այլեւայլ եկեղեցեաց մէջ կը գործածուէր, նոյնը սեպհականելով՝ առանց վանկ մ'իսկ վրան աւելցրնելու, մանաւանդ թէ բան մը զանց առնելով, այս ինքն՝ ան նշովքն որն որ ծայրը կար, ինչպէս քիչ մը ետքը պիտ'որ տեսնենք: Ուստի թէպէտ միջին ժամանակի Յոյնք ըսեն թէ Ս-Պոլսոյ հանգանակը Ս. Գրիգոր Նիւսացի շարադրած ըլլայ՝ եւ կամ Ս. Գրիգոր Նազիանզացի², եւ ընդհանրապէս գիտնոց մէջ ալ սովորութիւն ըլլայ անկասկած ըսելու թէ նոյն ժողովէն յօրինուած ու սահմանուած ըլլայ աս հանգանակը, ինչպէս ասկէ քանի մ'ամիս առաջ Տէօփնիկէր, Վէօսսինկ եւ այլք, սակայն եւ այնպէս՝ ալ չի կրնար տարակուսուիլ որ սոյն հանգանակն ան ժողովէն առաջ կար: Ուստի հիմայ Ս-Պոլսի հանգանակ ըսուածը՝ որն որ աս անուամբ նաեւ Արեւմուտք ընդունուեցաւ՝ Վիոնիսիոսի Աքսիգուսի Անտոնազրոց հրատարակութենէն ետքը, ի հնումն Նիկիական կ'անուանուէր Ս-Պոլսոյ ժողովէն թէ առաջ եւ թէ ետքը: Ասանուամբ նոյնը յառաջ կը բերէ Ս. Եպիփան արդէն 374 ին (Խարսիս. գլ. 121) ուր որ Ս-Պոլսոյ ժողովը 7 տարի անկէ ետքը գումարուած է: Ընոր համար զարմանալու բան չէ եթէ Ս. Գրիգոր Աստուածաբան՝ որն որ նոյն ժողովոյն գահերէց նստած էր, առ Սղետոնիոս (թուղթ 102) գրելով հաւատոյ վրայ, ուրիշ անուն հանգանակի չի տար, բայց եթէ Նիկիական:

Արդ կէս դարու միջոցին մէջ (այս ինքն 325էն մինչեւ 374) կը տեսնենք որ, ինչպէս մէկ կողմանէ Արիանոսը կը զեղծանէին օր աւուր հանգանակներ կարկատելով, մէկալ կողմանէ ալ ուղղափառք կ'ընդարձակէին Նիկիական հանգանակը: Որով չափով հերետիկոսներ յառաջադէմ կ'ըլլար՝ երեւցնելով հետզհետէ մոլորութեանց գրեթէ ամէն գլխաւոր երեւոյթները ի մասին վարդապետութեան Արրորդութեան եւ մարդեղութեան, նովին չա-

¹ Նիկեփ. Աղիստ. Եկեղ. Պատմ. Դպր. ԺԲ. գլ. 13:

² Ըստ Մարկոսի Եւգենիկոսի Փլըր. Ժողովի: